ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երևան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ. փոստ՝ meo@ypc.am

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի

(Լրացված և խմբագրված)

«Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի» ուղեցույցն ընդունվել է Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2017թ. հունվարի 30-ի նիստում: Սակայն, հաշվի առնելով մինչև 2020թ. մի քանի զինված ընդհարումների, ինչպես նաև նույն թվականի օգոստոսին հայ-ադրբեջանական սահմանին տեղի ունեցած միջադեպի և հատկապես 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ի պատերազմի ժամանակ լրատվամիջոցների աշխատանքի և տեղեկատվության աղբյուրների սահմանափակումները, ինչպես նաև տեղեկատվության տարածման, հասարակության իրազեկման ուղղությամբ պետական մարմինների անբավարար գործունեությունը և ակնհայտ քարոզչություն իրականացնելը, Դիտորդ մարմինը հարկ է համարում Ուղեցույցը ներկայացնել նոր խմբագրությամբ:

- 2016թ. ապրիլի 2-ին Ադրբեջանը, խախտելով տարիներով հաստատված զինադադարը, սանձազերծեց քառօրյա պատերազմ, որին զոհ գնացին 100-ավոր մարդիկ՝ քաղաքացիական անձինք և զինվորականներ:

- 2016թ. հուլիսին «Սասնա ծռեր» անունով հայտնի դարձած խմբավորումը զինված հարձակումով գրավեց ՀՀ ոստիկանության պարեկապահակային գնդի զորանոցը: Եղան զոհեր:

- 2020թ. օգոստոսին հայ-ադրբեջանական սահմանի Տավուշի հատվածում զինված բախումներ եղան:

- 2020թ. սեպտեմբերի 27-ից սկսվեց Արցախյան երկրորդ պատերազմը, որն անվանվեց 44-օրյա պատերազմ: Այդ պատերազմի հետևանքով, ըստ պաշտոնական տվյալների, ունենք 3621 զոհ, 321 մարդ համարվում է անհետ կորած:

Վերը թվարկված իրադարձությունների ժամանակ լրատվամիջոցներն ու լրագրողներն աշխատում էին արտակարգ ռեժիմով՝ միաժամանակ գործելով պետության կողմից տեղեկություններ տրամադրելու և տարածելու սահմանափակումների պայմաններում: Իսկ վերջին պատերազմը նշանակալի դարձավ ոչ միայն հակառակորդի կողմից ԱԹՍ-ների, նորագույն տեխնիկայի և ծանր հրետանու լայնամասշտաբ կիրառմամբ, այլ նաև տեղեկատվական-հաղորդակցական և դիվանագիտական դաշտում ծավալված հակամարտությամբ՝ այն դարձնելով ժամանակակից հիբրիդային պատերազմ՝ դրան հատուկ մարտահրավերներով:

Իրավիճակի նկարագրություն

2020թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի ագրեսիայով սկսվեց հայ-ադրբեջանական Արցախյան երկրորդ կամ 44-օրյա պատերազմը:

Նույն օրը Հայաստանում և Արցախում հայտարարվեց ռազմական դրություն:

ՀՀ կառավարության համապատասխան որոշման հավելվածով սահմանվեցին ռազմական դրության ժամանակ կիրառվող միջոցառումները և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումները, ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և մարմինները: Ընդ որում, ռազմական դրության շրջանակներում կիրառվող միջոցառումների իրականացման և իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների կիրառումն ապահովելու համար կարող էին ներգրավվել ռազմական դրության իրավական ռեժիմն ապահովող՝ պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության, ազգային անվտանգության պետական լիազոր մարմինների ուժերն ու միջոցները, ինչպես նաև պետական կառավարման համակարգի այլ մարմինների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի ներկայացուցիչները:

Այդ հավելվածի 4-րդ կետը վերաբերում էր հրապարակումների, հաղորդումների իրականացման սահմանափակումներին: Մասնավորապես. «Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում տեղի ունեցող մարտական գործողությունների, դրանց ուղղությունների, մարտական տեխնիկայի շարժի, մարտական գործողությունների արդյունքում պատճառված կորուստների և վնասների վերաբերյալ հրապարակումների, տեղեկատվական նյութերի, հարցազրույցների, հաղորդումների և դրանց հետ անմիջականորեն առնչվող այլ տեղեկությունների (…) հրապարակային տարածումը, փոխանցումը, ներառյալ ինտերնետային կայքերում և սոցիալական ցանցերում դրանց հրապարակումների ձևով (…) կատարվում է բացառապես պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության (…) հղումով՝ ամբողջությամբ արտացոլելով պաշտոնական տեղեկատվությունը (առանց խմբագրման)»:

Հատկանշական է, որ այդ սահմանափակումները չէին կիրառվում պետական պաշտոնատար անձանց հաղորդումների կամ նրանց հաղորդումներին կատարված հղումների նկատմամբ:

Սրանով ՀՀ իշխանությունները փաստորեն ձգտեցին ամբողջությամբ վերահսկողության տակ վերցնել լրատվական դաշտը: Եվ եթե պատերազմի սկզբում և առաջին կեսին այս քաղաքականությունը շատ դժգոհություններ չառաջացրեց, ապա հետագայում՝ ավարտին ավելի մոտ և հատկապես 2020թ. նոյեմբերի 9-ի ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի, Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի և ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի կողմից ստորագրած եռակողմ հայտարարության հրապարակումից հետո, հանրությունը և լրատվամիջոցների ներկայացուցիչները ակնհայտորեն տեսան և բարձրաձայնեցին նման քաղաքականության ոչ բարենպաստ հետևանքները:

Հատկանշական է, որ 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ գործում էր նաև միասնական տեղեկատվական շտաբը, տեղեկատվական կենտրոն էր ստեղծվել նաև Արցախում:

Այսուհանդերձ, հատկապես վերջին պատերազմն ակնհայտ դարձրեց ինչպես լրատվամիջոցների գործունեության, այնպես էլ պետական մարմինների կողմից տեղեկությունների տրամադրման մի շարք լրջագույն հիմնախնդիրներ՝ ինչպես տեխնիկական, կազմակերպչական, այնպես էլ քաղաքական և բովանդակային:

Օրինակ, արտասահմանյան լրատվամիջոցները, ինչպես մինչև, այնպես էլ պատերազմի ժամանակ տեղում աշխատելու համար պետք է հավատարմագիր ստանային երկու՝ Հայաստանի և Արցախի ԱԳ նախարարություններից: Հայաստանի ԱԳՆ տվյալներով՝ այդ ժամանակահատվածում դիմել են 600-ից ավելի միջազգային լրագրողներ, որոնք ստացել են հավատարմագրեր: Ռուսաստանցի մեկ լրագրողի՝ Իլյա Ազարի հավատարմագիրը կասեցվել է: ԱԳՆ-ն հայտնել է, որ վերջինս ունեցել է միայն մեկ՝ ՀՀ ԱԳՆ թույլտվություն, իսկ Արցախի տարածքում աշխատելու համար հավատարմագրում չի անցել, չի դիմել ո՛չ Հայաստանում Արցախի ներկայացուցչությանը, ո՛չ Արցախի ԱԳՆ-ին: Մարտական գործողությունների վայր Ազարը մեկնել է՝ խախտելով սահմանված կարգը: Թեև կան վարկածներ, որ դա, այնուամենայնիվ, կապված էր վերջինիս հեղինակած՝ ՀՀ իշխանություններին անհաճո հոդվածի հրապարակման հետ:

Արդեն պատերազմից հետո՝ 2021-ի փետրվարից փոխվել է օտարերկրացի այցելուների, այդ թվում նաև օտարերկրյա լրագրողների՝ Արցախ մուտքի կարգը. թույլտվություն ստանալուց հետո անհրաժեշտ է դա համաձայնեցնել կամ այդ մասին տեղյակ պահել նաև ռուս խաղաղապահներին: Գուցե այս անորոշությամբ է պայմանավորված, որ, ըստ որոշ տեղեկությունների, նույնիսկ մուտքի արտոնագիր ունեցող օտարերկրյա լրագրողները կա՛մ չեն կարողանում մուտք գործել Արցախ, կա՛մ դժվարություններ են ունենում:

Տեղեկատվության ոլորտում ծագած խնդիրներ

Ողջ պատերազմի ընթացքում հայկական կողմի տեղեկատվության հիմնական աղբյուրներն էին՝ Հայաստանի վարչապետը, ՀՀ ՊՆ խոսնակը, Հայաստանի պաշտպանության նախարարության ներկայացուցիչը, Արցախի նախագահը, Արցախի նախագահի մամուլի քարտուղարը, Արցախի Մարդու իրավունքների պաշտպանը: Այս և նաև այն պաշտոնյաները, որոնց հաղորդած տեղեկությունները լրատվամիջոցները

պարտավոր էին առանց խմբագրման արտատպել, շատ հաճախ հաղորդում էին միմյանց հետ չհամաձայնեցված, անգամ իրար հակասող տեղեկություններ։

Ռազմական գործողությունների և առաջնագծում իրական վիճակի մասին տեղեկությունների սահմանափակումն աղետալի հետևանք ունեցավ, երբ վիրավորները կամ հերթափոխի եկող զինվորականները, վերադառնալով ռազմաճակատից, սկսեցին պատմել, որ իրավիճակն այնտեղ ամենևին հաղթական չէ, ինչպես ներկայացնում են իշխանությունները. հասարակությունն սկսեց տեղեկություններ փնտրել արդեն ադրբեջանական և մասամբ՝ ուկրաինական ու ռուսական աղբյուրներում։ Աստիճանաբար հայկական տեղեկատվական դաշտը վերածվեց հակառակորդի հարթակի, որն այդ կերպ բավական արդյունավետորեն իրականացրեց հայաստանյան հասարակությունում խուճապ ու հուսահատություն տարածելու իր առաքելությունը։ Եվ երբ Հայաստանի իշխանությունները որոշեցին արգելափակել ադրբեջանական կայքերը, դա արդեն չազդեց իրավիճակի վրա և չէր կարող ազդել, մանավանդ որ նույն տեղեկությունները տարածում էին այլ երկրների, հատկապես՝ ռուսական և ուկրաինական աղբյուրները։ Սոցցանցերի հայաստանյան սեգմենտը և ԶԼՄ-ներն իրար փոխանցելով, տիրաժավորում էին կամ իշխանությունների՝ իրավիճակը ոչ ճշգրիտ ներկայացնող տեղեկությունները, կամ ադրբեջանական և՛ հավաստի, և՛ ոչ հավաստի նորություններն ու մանիպուլյատիվ լրատվական հոսքը։ Ընդ որում, ադրբեջանական կայքերից օգտվելու հնարավորությունից զրկվեցին նաև հայաստանյան լրագրողներն ու լրատվամիջոցները՝ որպես սկզբնաղբյուր պարտադրաբար ունենալով բացառապես ՀՀ իշխանությունների խողովակներով տրվող տեղեկությունները՝ այսպիսով որոշ չափով հայտնվելով տեղեկատվական շրջափակման մեջ։

Այս պայմաններում հայաստանյան շատ լրագրողներ ստիպված էին օգտագործել այսպես կոչված VPN կամ Վիրտուալ մասնավոր ցանց, որը հնարավորություն է տալիս այցելել աշխարհագրական առումով սահմանափակումների ենթակա կայքեր՝ պրակտիկա, որը բարեխղճության տեսանկյունից այնքան էլ խրախուսելի չէ։

Ընդ որում, ի պատասխան լրագրողական կազմակերպության հարցման, ԱԱԾ-ն ինտերնետի հասանելիության սահմանափակումները պատճառաբանել է, որ. «Ռազմական դրությամբ պայմանավորված, պատերազմական գործողությունների ընթացքում, իրավիճակային անհրաժեշտությամբ պայմանավորված որոշակի ժամանակավոր լուծումներ է կիրառել՝ հանդես գալով ՀՀ և ԱՀ անվտանգությանը վնասող և կասկածելի ծագում ունեցող լրատվական կայքերի, սոցիալական ցանցերի, տարբեր հարթակների դեմ ուղղված հրապարակային հայտարարություններով, հորդորներով ու պարզաբանումներով»։

Դրան գումարվեց այն, որ իրավիճակին շատ ավելի տեղյակ լրագրողները, որոնք գտնվում էին անմիջականորեն ռազմական գործողությունների վայրերում կամ կարողանում էին շրջանցել համացանցային սահմանափակումներն ու արգելքները և պաշտոնական տեղեկատվությունը համադրել այլ աղբյուրներից ստացված լուրերի հետ, իրենք հայտնվեցին խոցելի վիճակում՝ ենթակա դառնալով օրենքի առջև պատասխանատվության։

Նշենք, որ պատերազմի ողջ ընթացքում Ադրբեջանում արգելափակման տարբեր մեխանիզմներ էին կիրառվում գրեթե բոլոր սոցիալական ցանցերի՝ ֆեյսբուքի, յություբի,

վոթսափի, թիկ-թոկի նկատմամբ, բացառությամբ որոշակի սահմանափակումներով՝ թվիթերի։

ՀՀ իշխանությունների տրամադրած տեղեկությունների նկատմամբ անվստահությունն է՛լ ավելի խորացավ պատերազմի ավարտից հետո, երբ ակնհայտ դարձավ, որ ավելի քան 40 օր որպես կարգախոս հռչակված «Հաղթելու ենք»-ը, «Գյոռբագյոռ»-ը և համանման այլ բառախաղերը և այդ տրամաբանության մեջ իրականացվող պետական տեղեկատվական քաղաքականությունն ընդհանրապես, իրավիճակը ներկայացրել են տրամագծորեն հակառակ կերպ։

Այսպես, օրինակ, ՀՀ ՊՆ և այլ պաշտոնական խողովակներով հրապարակվող այն կարգի հաղորդագրությունները, որոնց համաձայն՝ Արցախի ՊԲ-ն հաջող դիմակայել է բոլոր հարձակումներին՝ հակառակորդին հասցնելով անձնակազմի և տեխնիկայի զգալի կորուստներ, կամ ՊՆ ներկայացուցիչ Արծրուն Հովհաննիսյանը հայտնում է, որ ըստ հետախուզական տվյալների՝ ադրբեջանական զոհերի թիվն արդեն անցնում է 3000-ը, կամ՝ համաձայն Պաշտպանության նախարարության հաղորդագրության՝ ժամը 14:00-ի սահմաններում Ադրբեջանը հարավային սահմանի երկու ուղղություններով գրոհ է ձեռնարկել, որը ՊԲ ստորաբաժանումները կասեցրել են, ադրբեջանական զինուժին պատճառվել են կենդանի ուժի զգալի կորուստներ, ինչպես հետագայում պարզվեց, հաճախ կամ մասամբ, կամ ամբողջությամբ չէին համապատասխանել իրականությանը։

Լրագրողներն ակնհայտորեն վերանայեցին ռազմական գերատեսչությունների հետ իրենց հարաբերությունները։ Աստիճանաբար ավելացան պաշտոնական տեղեկությունները ՏԻՄ առաջնորդներից և համայնքների ներկայացուցիչներից ճշտելու դեպքերը։

2020թ. պատերազմի ընթացքում ադրբեջանական զինուժի հարձակումների հետևանքով ծանր վիրավորում է ստացել 7 լրագրող,այդ թվում՝ օտարերկրյա ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, զոհվել է լրագրողներին ուղեկցող մեկ անձ։ Հատկանշական է, որ այդ բոլոր լրագրողները վիրավորում ստացել են ռազմական ենթակառուցվածքներից և առաջնագծից հեռու, խաղաղ բնակավայրերում իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելիս, իսկ նրանց մեքենաներն ունեցել են PRESS տարբերանշանը։ Սա անուղղակիորեն ապացուցում է, որ լրագրողների նկատմամբ հարձակումները եղել են թիրախավորված և նպատակային։

Ընդհանուր առմամբ, պատերազմի ողջ ժամանակահատվածում ռազմական գործողությունները լուսաբանելու համար Լեռնային Ղարաբաղ են ժամանել միջազգային 290-ից ավելի լրատվամիջոցների ներկայացուցիչներ, ավելի քան 390 անկախ և ԶԼՄ-ների հետ փոխկապակցված լրագրողներ։

Հիմնական մարտահրավերները

- 2016թ. «Քառօրյա պատերազմի», նույն թվականի հուլիսին «Սասնա ծռեր» խմբավորման կողմից ՀՀ ոստիկանության պարեկապահակային գնդի գրավման և դրա շուրջ ծավալված հետագա իրադարձությունների, ինչպես նաև նախորդ տարիների հավաքների և երթերի («Էլեկտրիկ Երևան» և այլն) ընթացքում առաջացող

ընդհարումների լուսաբանման ժամանակ ակնհայտ էր արտակարգ իրավիճակները, հատկապես պատերազմական իրադարձությունները լուսաբանելու՝ լրատվամիջոցների ու լրագրողների հմտությունների որոշակի պակասը, ինչպես նաև տեղեկատվական հոսքերը հնարավորինս վերահսկելու՝ իշխանությունների ջանքերը։

- 2016թ. ապրիլյան զինված բախումների ժամանակ առաջնագծում աշխատող լրագրողները, օպերատորներն ու լուսանկարիչները հաճախ անտեսում էին անվտանգության կանոնները, չունեին պաշտպանության անհատական միջոցներ։

- Թեպետ 2020թ. սեպտեմբերի 27-ից նոյեմբերի 10-ի 44-օրյա պատերազմի ժամանակ արդեն մի շարք լրագրողական հասարակական կազմակերպություններ առաջնագիծ մեկնող լրագրողներին առաջարկում էին զրահաբաճկոններ և պաշտպանիչ այլ միջոցներ, այդուհանդերձ, լրագրողների կողմից պաշտպանական անհատական միջոցների կիրառումը բավարար չէր։

- Ընթացող լայնածավալ պատերազմում ադրբեջանական զինուժը պարբերաբար թիրախային հարձակում է գործել հայաստանյան և արտասահմանյան լրագրողների վրա՝ նրանց պատճառելով տարբեր աստիճանի վնասվածքներ։

- Որքան էլ տարօրինակ է, քարոզչական ճակատում շատ ավելի խնդրահարույց եղավ ՀՀ իշխանությունների վարած քաղաքականությունը։ Հատկապես 2020թ. 44-օրյա պատերազմի ժամանակ խիստ անարդյունավետ էր պետական մարմինների հետ լրատվամիջոցների համագործակցությունը։ Լրատվամիջոցներին պարտադրելով ապավինել միայն պաշտոնական աղբյուրներին և տարածել միայն իրենց տված տեղեկությունները՝ պետական կառույցներն ընդհանրապես, իսկ առաջանագծից հանրությանը հավաստի և հավասարակշռված տեղեկություններով ապահովելու նպատակով ստեղծված միասնական տեղեկատվական կենտրոնը՝ մասնավորապես, չապահովեցին ամբողջական, հավաստի տեղեկություններ, չդարձան վստահելի աղբյուր։ Սրա ուղղակի հետևանքը եղավ այն, որ խորը անվստահություն առաջացավ ընդհանրապես պաշտոնական հաղորդագրությունների նկատմամբ։

- ՀՀ հասարակությունը և լրատվամիջոցները լրջագույն մարտահրավերներ ունեցան պատերազմում ադրբեջանական կողմի տեղեկատվական լայնածավալ գրոհների առումով, ոչ միայն բովանդակային, այլ նաև՝ կայքերի և աղբյուրների անվտանգության առումով։ Հայաստանյան լրատվական և պաշտոնական կայքերի նկատմամբ բազմաթիվ հարձակումները խնդիրներ հարուցեցին ողջ հանրության մեջ, իսկ իսկ հայերեն, ռուսերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով ապատեղակտվության, մանիպուլյացիոն և կեղծ տեղեկությունների հեղեղն անկասելի էր։

- Բազմաթիվ են այն դեպքերը, երբ առաջնագծում աշխատող լրագրողները խուսափում էին ռազմական, մատակարարման և համանման առանձին դրվագների, ինչպես նաև ընդհանրապես պատերազմի՝ իրենց հասանելի դարձած իրական պատկերը ներկայացնելուց, քանի որ պետական մարմինները կարող էին նրանց մեղադրել քայքայիչ գործունեության կամ պետական գաղտնիք տարածելու մեջ։

- Հիշեցնենք, որ 44-օրյա պատերազմն ընթանում էր կորոնավիրուսային համաճարակի պայմաններում, ինչն է՛լ ավելի էր բարդացնում իրավիճակը։

- Խիստ մտահոգիչ և խնդրահարույց էր վերջին պատերազմի ընթացքում ՀՀ իշխանությունների կողմից ադրբեջանական կայքերի արգելափակման փորձը, որը կարելի է գնահատել որպես գրաքննություն, քանի որ ինչպես խաղաղ պայմաններում, այնպես էլ ռազմական գործողությունների ժամանակ հավասարակշռված և հավաստի տեղեկություններ հաղորդելու համար լրագրողները կարիք ունեն նաև հակառակորդի տեղեկատվական դաշտի հասանելիության: Միևնույն ժամանակ այդ նախաձեռնությունը ուներ կասկածելի արդյունավետություն: Հարկ է նշել, որ Ադրբեջանում նույնպես սահմանափակում էին իրենց կայքերի հասանելիությունը հայ օգտատերերի համար:

- Սոցցանցերում անխնա տարածվող տեղեկությունները առանց ֆիլտրման հայտնվում էին ԶԼՄ-ներում, զանազան տեղեկատվական հարթակներում, պորտալներում և այլն:

- Առանձին հիշատակման առարկա է պետական գերատեսչությունների, հատկապես Պաշտպանության նախարարության կողմից անմիջականորեն առաջնագծում աշխատելու հարցում լրագրողների նկատմամբ ընտրողական վերաբերմունքը՝ հիմնված ոչ թե նրանց մասնագիտական կարողությունների, այլ ներկայացրած լրատվամիջոցի վրա, ընդ որում, բազմափորձ լրագրողների նկատմամբ նախապատվությունը տալով օտարերկրյա ԶԼՄ-ների ներկայացուցիչներին:

- Ինչպես բուն պատերազմական գործողությունների ժամանակ, այնպես էլ դրանից հետո, հատկապես սահմանների զատորոշման մասին տեղեկությունների, սահմանային միջադեպերի, ռազմական գործողությունների ավարտից հետո հակառակորդի առաջխաղացման, անգամ Ադրբեջանում պահվող ռազմագերիների հնարավոր վերադարձի մասին տեղեկությունների հաստատման, հերքման զգայուն թեմաների հարցում պետական տեղեկատվական քաղաքականությունը կորցրեց ենթադրվող առաջատարի իր դիրքերը. պետական գերատեսչությունները դադարեցին լինել ամենավստահելի աղբյուրները՝ իրեն տեղը զիջելով տեղական ինքնակառավարման մարմիններին:

- 2020թ. պատերազմն ակնհայտ դարձրեց մի իրողություն, երբ փորձառու լրագրողները տիրապետում էին հանրային նշանակության տեղեկությունների, որոնք սակայն, պետության կիրառած արգելքների պարագայում, իրավունք և հնարավորություն չունեցան հայտնելու իրենց լսարանին, ավելին, նույնիսկ ամենաաղոտ ակնարկները, որոնք կարող էին հասարակությանը հանել ապատեղեկատվության թմբիրից, դատապարտման, ատելության և ճնշումների արժանացան հանրության կողմից: Նման պարագայում, երբ պետության տեղեկատվական քաղաքականությունը հեռու է արհեստավարժության և պատասխանատվության շրջանակներից, համապատասխանաբար կարող են փոխվել նաև ԶԼՄ-ների և առանձին լրագրողների պատասխանատվության չափը և մոտեցումները պետական քաղաքականության նկատմամբ՝ փոխհատուցելու վերջինի բացերը՝ նկատի ունենալով նաև հասարակության կողմից հնարավոր ճնշումները:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի մշակած՝ պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների ու լրատվամիջոցների վարքի

սույն ուղեցույցի նոր՝ լրամշակված և խմբագրված տարբերակը ունի զուտ խորհրդատվական բնույթ:

Միաժամանակ, Դիտորդ մարմինը շեշտում է, որ անհրաժեշտ է բարձրացնել այս հարցում ինչպես լրագրողների, լրատվամիջոցների սեփականատերերի և ղեկավարների մասնագիտական-էթիկական պատասխանատվության, հանրության մեդիագրագիտության մակարդակը, այնպես էլ պետական մարմինների տեղեկատվական քաղաքականության արդյունավետությունը:

Ա. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԷԹԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների լուսաբանման ժամանակ ևս, ինչպես լրատվամիջոցների և լրագրողների ամենօրյա մասնագիտական գործունեության ընթացքում, հարկ է առաջնորդվել ընդհանուր էթիկական սկզբունքներով: Մասնավորապես.

1. Հավաստիություն և ճշգրտություն

Հատկապես պատերազմական պայմաններում խիստ կարևորվում է ստուգված և հավաստի տեղեկությունների հրապարակումը՝ տեղեկությունների աղբյուրներին հղումով: Հետևաբար, միայն բացառիկ դեպքերում է պետք կիրառել աղբյուրը չբացահայտելու սկզբունքը: Այդ դեպքերում էլ խորհուրդ ենք տալիս առաջնորդվել «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» 1.2 կետի պահանջով.

«1.2. Հստակորեն ու լսարանի համար հասկանալի մատնանշել այն դեպքերը, երբ խմբագրությունը, ստանալով հանրային նշանակության տեղեկություններ, օգտագործել է բոլոր հնարավոր ռոջամիտ միջոցները, սակայն չի կարողացել ճշտել փաստերը»:

Այսուհանդերձ, գերադասելի է, որ հրապարակվող տեղեկություններն անպայման ստուգված լինեն մի քանի աղբյուրներից և հրապարակումներում հստակորեն նշվեն այդ աղբյուրները:

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ առավել քան երբևէ անհրաժեշտ է պահպանել ճշգրտության կանոնները՝ առաջնորդվելով «Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագրի» հետևյալ պահանջներով.

1.5. Ձգտել, որ հաղորդագրությունները, լուսանկարային, տեսագրված ու ձայնագրված նյութերը համապատասխանեն իրականությանը, վերնագրերը բխեն նյութի բովանդակությունից, չչարաշահվի հանրահայտ դեմքերի անձնական տվյալների հետ ակնհայտ նմանությունը, մեջբերումները չօգտագործվեն համատեքստից դուրս,

1.6. Չաղավաղել լուսանկարային կամ տեսագրված նյութի բովանդակությունը, լուսանկարներում և տեսանյութերում տեխնիկական հնարքներ կիրառելու և միջամտությունների դեպքում անպայման նշել այդ մասին:

Խորհուրդ է տրվում նման իրավիճակներում ընդհանրապես լուսանկարների և տեսանյութերի բովանդակությունը փոխող տեխնիկական միջամտություններ չանել, բացառությամբ՝ եթե անհրաժեշտ է քողարկել մարդկանց դեմքերը կամ սահմռկեցուցիչ պատկերները: Տեխնիկական միջամտություններն ընդունելի են նաև, երբ հարկ կա քողարկել հակամարտության կամ զինված բախումների գոտու դիրքերն ու մարտական տեխնիկան, և եթե իրավիճակի համար պատասխանատու ռազմական, անվտանգության և իրավապահ մարմինները այդ մասին համապատասխան հրահանգ են տարածել:

2. Փաստերի, կարծիքների և մեկնաբանությունների տարանջատում

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ առավել հստակ պետք է տարանջատված լինեն փաստերը, կարծիքները և մեկնաբանությունները: Այլապես լսարանը կարող է ինչ-որ մեկի կարծիքը կամ մեկնաբանությունն ընկալել իբրև կայացած փաստ, ինչը նման իրավիճակներում լսարանի մոտ իրադարձությունների վերաբերյալ ոչ համարժեք տպավորություն կստեղծի: Մեկնաբանությունները պետք է հիմնված լինեն բացառապես ստուգված փաստերի վրա և ներառեն իրավիճակի վերաբերյալ իրազեկ և իրավասու մարմինների գնահատականները:

3. Անաչառություն և անկողմնակալություն

Անաչառության և անկողմնակալության սկզբունքները պահպանելու համար, լրագրողները, մասնագիտական պարտականությունները կատարելիս, պետք է զերծ մնան ներքին հակամարտությունների ժամանակ հավաքներին և այլ միջոցառումներին, իսկ պատերազմի և զինված բախումների իրավիճակում՝ մարտական գործողություններին անմիջական մասնակցությունից: Լրագրողը դրանց ներկա պետք է լինի միայն լուսաբանելու համար: Ինչ վերաբերում է պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ տուժածներին կամ վտանգի տակ հայտնված անձանց օգնելուն՝ ի հաշիվ մասնագիտական պարտականությունների ժամանակին կատարման, ապա դա կոնկրետ իրավիճակում կոնկրետ լրագրողի և խմբագրության բարոյական ընտրության հարց է, ինչի թե՛ իրավունքի և թե՛ պատասխանատվության կրողն են տվյալ լրագրողն ու խմբագրությունը:

Անհրաժեշտ է գիտակցել հայտնի սկզբունքը՝ մարտական գործողություններին զենքով մասնակցելու դեպքում լրագրողը կորցնում իր հատուկ կարգավիճակը ու զրկվում է միջազգային հումանիտար իրավունքով նախատեսված պաշտպանությունից:

Բ. ԵՐԿԸՆՏՐԱՆՔՆԵՐ

Պատերազմի, զինված բախումների և ներքին հակամարտությունների ժամանակ լրագրողների առջև ծառանում են մի շարք երկընտրանքներ: Բոլոր դեպքերում լրագրողն ու նրա ներկայացրած լրատվամիջոցի ղեկավարներն են որոշում, թե ինչպես վարվել այս կամ այն իրավիճակում, և պատասխանատու են այդ որոշման համար: Միշտ անհրաժեշտ է որոշումը բացատրել լսարանի համար:

1. Մեկնե՞լ, թե՞ չմեկնել մարտական գործողությունների գոտի

Այս երկընտրանքը մի լուծում ունի. յուրաքանչյուր լրագրող, օպերատոր, լուսանկարիչ, տեխնիկական աշխատող ինքը պետք է մեկնելու որոշում կայացնի: Ոչ մի խմբագրություն չպետք է մարտական գործողությունների գոտի գործուղի անձի՝ առանց վերջինիս հստակ որոշման, ինչո՞ւ ոչ՝ նաև գրավոր համաձայնության:

Ցանկալի է, որ բոլոր լրագրողները նախապես ձեռք բերեն պատերազմական պայմաններում աշխատելու հմտություններ, ԶԼՄ-ներն իրենց հերթին ստեղծեն պայմաններ՝ դա կազմակերպելու համար կամ առնվազն նպաստեն դրան:

2. Հրապարակե՞լ, արդյոք, հասու դարձած ռազմական գաղտնիքը, եթե այն հանրային նշանակություն ունի

Հնարավոր է, որ առաջնագծում գտնվող զինծառայողներն ակամա կամ առանց գիտակցելու ռազմական գաղտնիքներ բացահայտեն: Հնարավոր է այլ՝ ոչ ապօրինի ճանապարհով տեղեկանալ ռազմական գաղտնիքի մասին: Եթե լրագրողի ու լրատվամիջոցի համար ակնհայտ է, որ իրենց ռազմական գաղտնիք են հայտնել, ապա որոշում կայացնելուց առաջ հարկ է լրջորեն քննարկել հրապարակելու կամ չհրապարակելու դրական և բացասական կողմերն ու հասարակական պահանջը՝ առաջնորդվելով տևական հանրային շահի պաշտպանության սկզբունքով: Ամեն դեպքում, խորհուրդ չի տրվում հրապարակել առնվազն՝

- զորամասերի իրական անվանումները, տեղակայման վայրերը, դիրքերը կամ կողմնորոշիչները
- զորքերի կառուցվածքը, մարտական կազմը, սպառազինության, ռազմական տեխնիկայի, նյութատեխնիկական միջոցների քանակը, տեխնիկայի շարժը
- լուսանկարներ, տեսանյութեր, որտեղ երևում են հրամանատարական կետերը, կրակակետերը, ինչպես նաև դրանց կողմնորոշիչներն ու համայնապատկերը
- զորակոչի մասին տվյալներ, լուսանկարներ զինվորական հավաքակայաններից, զինակոչիկների շարժը և նրանց հայտնած տեղեկություններն իրենց ծառայության վայրի մասին
- զինծառայողների կամ կամավորականների տեսանյութերն ու հաղորդագրությունները՝ առանց դրանք նախնական մշակման ենթարկելու:

Մյուս դեպքերում՝ ստացած տեղեկությունները հարկ է համեմատել «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ («**Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկությունները»**) հոդվածի 1-ին՝ ռազմական բնագավառին վերաբերող մասի հետ (տե՛ս սույն Ուղեցույցի **հավելված 1-ում**):

Փորձառու լրագրողները, որոնք տիրապետում են հանրային նշանակության այնպիսի տեղեկությունների, որոնք տվյալ ժամանակաշրջանում օրենքով գործող արգելքների պարագայում իրավունք չունեն հայտնելու իրենց լսարանին, կարող են և վերանայել

իրենց պատասխանատվության չափը, ինչպես նաև, սեփական պատասխանատվությամբ, փոխհատուցեն վերջինի բացերը:

3. Գրե՞լ, արդյոք, տեսած վատ արարքների, հոռի բարքերի մասին (լինի բանակում՝ պատերազմի իրավիճակում, թե քաղաքացիական անհնազանդության ժամանակ՝ ցուցարարների շրջանում)

Նկատածն ու արձանագրածը հանրությունից թաքցնելը լրագրողական էթիկայի տեսակետից ընդունելի չէ: Մյուս կողմից՝ հրապարակելու դեպքում լրագրողը կարող է զրկվել պատերազմական կամ հավաքների ժամանակ տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանելու հնարավորությունից: Ավելին, մեկ նախադեպը կարող է ողջ լրագրողական համայնքի համար հետագա բարդություններ ստեղծել: Դարձյալ՝ որոշում կայացնելուց առաջ հարկ է քննարկել հրապարակելու կամ չհրապարակելու բոլոր դրական ու բացասական կողմերը: Ամեն դեպքում, նման երևույթների մասին տեղեկությունները չպետք է օգտագործել շանտաժի, անձնական շահերի կամ որևէ մեկին վարկաբեկելու նպատակով: Իսկ հրապարակելու դեպքում՝ անպայման ստանալ և ներկայացնել նաև մասնակիցների կարծիքներն ու մեկնաբանությունները:

4. Հրապարակե՞լ, արդյոք, սենսացիոն լուսանկարը կամ տեսանյութը, որով հնարավոր է նույնականացնել ռազմական օբյեկտներն ու դիրքերը

Խորհուրդ չի տրվում այդպես վարվել: Այս դեպքում ավելի լավ է տեխնիկական միջամտությամբ այնպես անել, որ դիրքերը չերևան: Տեխնոլոգիաների զարգացման ներկա պայմաններում այդ նյութերը կարող են ծառայել հակամարտության մյուս կողմի շահերին:

5. Հրապարակե՞լ, արդյոք, զոհվածների մարմինների լուսանկարները կամ տեսանյութ այդ մասին

Սա ամենաբարդ երկընտրանքն է. հրապարակելը ցույց կտա պատերազմի և զինված հակամարտության սարսափները, սակայն կարող է նաև մարդկանց հոգեկան տառապանք պատճառել: Ամեն դեպքում, պետք է հրապարակելիս այնպես քողարկել դեմքերը, որ անձը չնույնականացվի. չէ՞ որ նպատակը սարսափները ցույց տալն է և ոչ թե կոնկրետ անձի մահը կամ խոշտանգված վիճակը: Եթե, այսուհանդերձ, որոշվել է հրապարակել, ապա ցանկալի է վերնագրում կամ այլ տեսանելի եղանակով նշել, որ նյութը պարունակում է այնպիսի նկարներ, որոնք կարող են մարդուն հոգեկան տառապան պատճառել:

6. Հրապարակել միայն պաշտոնակա՞ն տեղեկություններ, թե՞ նաև այլ աղբյուրներից ստացածը:

Պետական մարմինները, հատկապես պատերազմական իրավիճակում, հաճախ լրատվամիջոցներից պահանջում են հրապարակել միայն պաշտոնական հաղորդագրությունները՝ համարելով, որ միայն դրանք են պարունակում հավաստի և ճշգրտված տեղեկություններ: Սակայն հանրությունը իրավունք ունի իմանալու ավելին: Ուստի պատերազմական կամ այլ լարված իրավիճակներում, հարկ է, որ

իրադարձությունների վայրում աշխատող լրագրողը ներկայացնի նաև իր արձանագրածն ու այլ աղբյուրներից ստացածը՝ պահպանելով սակայն նախորդ կետերում ներկայացված սկզբունքները, քանի որ միայն պաշտոնական տեղեկությունների հրապարակումը հղի է պետական քարոզչությանն ակամա մասնակցելու վտանգով: Անհրաժեշտ է զգուշավոր և պատասխանատու լինել նաև սոցցանցերից կամ նոր մեդիա հարթակներից ստացված տեղեկությունների հետ աշխատելիս, այդպիսիք տարածելու դեպքում հարկ է նշել դրանց ստուգված, վստահելի կամ հետագա ստուգման ենթակա լինելը:

7. Հրապարակե՞լ անհետ կորածների, ռազմագերիների, գերեվարվածների լուսանկարներ և այլ անձնական տվյալներ, թե՞ ոչ:

- Թեպետ անհետ կորածների, ռազմագերիների և գերեվարված անձանց տվյալները, այդ թվում՝ լուսանկարները չտարածելը հակասում է տեղեկությունները չկոծկելու և տեղեկատվության ամբողջականության էթիկական սկզբունքներին, այդուհանդերձ, տվյալ պարագայում անձնական տվյալների պաշտպանության և հատկապես ռազմագերիների և գերեվարված անձանց անվտանգության հանրային շահը գերակա է, մանավանդ եթե նկատի առնենք, որ հակառակորդը կարող է նաև դրանք օգտագործել քաղաքական և այլ մանիպուլյացիաների նպատակով:

- Անձնական տվյալների, այդ թվում լուսանկարների տարածումը կարող է թույլատրելի լինել, եթե անձի համաձայնությունը ստանալու անհնարինության պարագայում, յուրաքանչյուր առանձին դեպքի համար առկա է նրա ընտանիքի անդամների համաձայնությունը: Համանման դեպքերում անհրաժեշտ է սահմանափակվել այն տվյալների տարածումով, որոնք ընտանիքի կամ հարազատների անմիջական տրամադրության տակ են կամ ստացվել են պաշտոնական ոչ գաղտնի աղբյուրներից: Անհրաժեշտ է բացառել նաև տարածման վերաբերյալ ընտանիքի անդամների հակասական դիրքորոշումը: Ինչպես նաև տարածումից առաջ համոզվել, որ ընտանիքի անդամները և հարազատները գիտակցում են անձնական տվյալների հանրայնացման հետ կապված ռիսկերը՝ շանտաժ, մեքենայություններ և այլ չարաշահումներ:

- Այսուհանդերձ, հարկ է անհետ կորածների, ռազմագերիների, գերեվարվածների հարազատներին բացատրել անձնական տվյալների և դրանց գաղտնիության կարևորությունը, ինչպես նաև՝ դրանց հրապարակման դեպքում հնարավոր բոլոր հետևանքները:

- Խորհուրդ է տրվում նախկին կամ պահվող ռազմագերուն, գերեվարված անձին վերաբերող հրապարակման մեջ չգործածել գերեվարած կողմի տարածած որևէ լուսանկար, տեսանյութ, տեքստ կամ հղում, եթե նույնիսկ նախկին ռազմագերին կամ պահվող ռազմագերին կամ նրա հարազատները ֆորմալ առումով համաձայն են այդ բովանդակության հրապարակմանը. տուժած անձինք երբեմն բավականաչափ հստակ չեն գիտակցում սեփական հեռագնա շահերը և առանց մասնագետների հետ քննարկելու՝ տալիս են իրենց համաձայնությունը: Այսինքն, այս պարագայում, տուժած անձի համաձայնությո՛ւնն էլ կարող է որոշիչ չլինել էթիկայի տեսանկյունից:

8. Խուսափե՞լ տեղեկատվական պատերազմից, թե՞ դառնալ դրա ակտիվ մասնակիցը

Խորհուրդ չի տրվում դառնալ տեղեկատվական պատերազմի կողմ: Լրագրողի և լրատվամիջոցի անմիջական գործառույթը տեղեկացնելն է և ոչ թե հակամարտության կողմերից մեկի քարոզչությունն իրականացնելը: Միևնույն ժամանակ, պատերազմական իրավիճակներում կարծիքների բազմազանության սկզբունքը, երբ խոսքը վերաբերում է հակառակորդի տեսակետները և մեկնաբանությունները ներկայացնելուն, միշտ չէ, որ կիրառելի է: Սակայն, երբ պետության տեղեկատվական քաղաքականության մեջ ակնհայտորեն պակասում է արհեստավարժությունը, կարող են փոփոխվել նաև ԶԼՄ-ների և առանձին լրագրողների մոտեցումները պետական քաղաքականության նկատմամբ՝ փոխհատուցելու վերջինի բացերը՝ դիտարկելով տեղեկատվական հոսքերի ստացման, մշակման և տարածման սեփական քաղաքականության մշակման նպատակահարմարությունը: Ընդ որում, հաշվի առնելով, թե որն է այդ տեղեկությունների հիմնական լսարանը, կարևոր է նրբանկատ լինել պատերազմի և հակամարտող կողմերի նկատմամբ վերաբերմունքի հարցում (բառապաշար, տեղանուններ, զոհերի, վիրավորվածների, տուժածների նկատմամբ զգացմունքային ապրումներ և այլն): Այսինքն, առավելագույնս ձգտել պահպանել այսպես կոչված ոսկե միջինը՝ առանց պատերազմական քարոզչության մեջ ներքաշվելու, պահպանելով առավելագույն նրբանկատություն և զգուշավորություն սեփական լսարանի նկատմամբ՝ հնարավորինս իրականացնել բացառապես տեղեկացնելու գործառույթ:

Գ. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ռազմական գործողությունները ենթադրում են նաև որոշակի անվտանգության կանոններ և միջոցառումներ:

1. Պատերազմական գործողություններն ու զինված հակամարտությունները լուսաբանող լրատվամիջոցներին խորհուրդ է տրվում պատերազմի գոտի ուղարկել նախապես վարժանք-դասընթացներ անցած լրագրողի: Ցանկալի է նաև, որ, անկախ պատերազմական գոտի մեկնելու հանգամանքից, վարժանք անցնեն ԶԼՄ-ների բոլոր աշխատակիցները:

2. Լրագրողներին խորհուրդ է տրվում.

- Անպայման իր հետ ունենալ անձը հաստատող փաստաթուղթ, լրագրողի վկայական: Անպայման կրել տարբերակիչ արտահագուստ, իսկ պատերազմի գոտում՝ զինվորական համազգեստից տարբերվող հագուստ՝ լրագրող լինելը հավաստող PRESS նշումով:

- Հայտնվելով պատերազմի գոտում՝ խուսափել զինվորական համազգեստ և զենք կրելուց, որպեսզի թիրախ չդառնան և որպեսզի գերի ընկնելու դեպքում նրանց հետ չվարվեն որպես ռազմագերու:

- Հակառակորդի համար թիրախ չդառնալու նկատառումներից ելնելով, առաջանագծում չօգտագործել բջջային հեռախոս և ժամանակակից կապի այլ միջոցներ: Դրանք, ինչպես նաև լուսանկարչական և տեսանկարահանման սարքերը կարող են նոր տեխնոլոգիական զենքերի ուղղորդիչներ դառնալ: Սակայն, եթե հնարավոր չէ հեռախոսը անջատել, այսինքն, եթե այն

օգտագործվում է որպես մասնագիտական գործիք, հարկավոր է դնել Airplane mode-ի վրա ու անպայման անջատել գեոլոկացիան ու հնարավոր բոլոր գործառույթները, որոնց միջոցով կարող են տեղորոշել և թիրախավորել ոչ միայն լրագրողին, այլ նաև նրա շրջակայքում գտնվողներին:

- Կարևոր է տեղանքի ուսումնասիրությունն ու տեղանքին ծանոթ լինելը, օրինակ՝ ապաստարանների դիրքին, վայրին, արագ կողմնորոշվել, թե որ տարածքը կարող է անվտանգ լինել, և ինչ կարելի է անել ռմբակոծության կամ հարձակման դեպքում: Նաև ծանոթանալ ազդանշաններին, դրանց նշանակությանը և թե ինչ պետք է անել ազդանշանի հնչելու դեպքում:

- Հետևել համապատասխան մարմինների խորհուրդներին, մոտ չգնալ և ձեռք չտալ տարածքում առկա ռումբերին և դրանց մոտ ընկած իրերին: Չպայթած ռումբը հնարավոր է պայթի հենց այդ ընթացքում:

- Երբ լրագրողը բնակվում է պատերազմի գոտում, ցանկալի է նկատի ունենալ հետևյալ անվտանգության կանոնները. չվառել սենյակի լույսերը, վարագույրներով կամ այլ կտորներով փակել պատուհանները և ապակեպատ դռները: Ընտրել հնարավորինս ներքևի հարկերը, հստակ իմանալ տվյալ շինության ապաստարանի տեղը՝ հարկ եղած դեպքում այնտեղ պատսպարվելու համար: Պատուհաններից հեռու քնել, քանի որ դրանք կարող են փշրվել պայթյունի ալիքից, սենյակում ընտրել առավել ապահով տարածքը: Քնել հագուստով՝ միշտ պատրաստ լինելով ապաստարան գնալու համար:

- Չկուտակվել մեկ տարածքում, խուսափել մեծ խմբով պատերազմի դաշտում աշխատելուց. այդ դեպքում մեծանում է թիրախավորվելու հավանականությունը: Սա կարևոր է հատկապես ռազմավարական օբյեկտների տարածքում գտնվելիս, օրինակ՝ զորամաս, ՊՆ, կառավարության, նախագահական և այլ շենքերը, որոնց թիրախավորվելու հավանականությունը շատ ավելի մեծ է:

- Ցանկալի է, որ լրատվամիջոցի վարորդը տարածքին ծանոթ լինի, հարձակման դեպքում կարողանա կողմնորոշվել:

- Մեքենան պետք լինի մուգ գույների, որպեսզի թիրախավորվելու հավանականությունը քչանա, իսկ մեքենայի արագությունը պետք է կայուն չլինի՝ անօդաչու թռչող սարքերի թիրախ չդառնալու համար: Խորհուրդ է տրվում խուսափել ճանապարհից մարդ վերցնելուց. պատերազմի ընթացքում հնարավոր չէ կանխատեսել, թե ովքեր կարող են ներթափանցել տարածք, իսկ «անօգնական տատիկը» կարող է լինել լրտես կամ ահաբեկիչ:

3. Լրատամիջոցների սեփականատերերին և ղեկավարներին խորհուրդ է տրվում.

- Որոշակի պարբերականությամբ կազմակերպել նախապատրաստական վարժանք-դասընթացներ աշխատակիցների համար՝ այդ նպատակով սերտորեն համագործակցելով դաշտում գործող տեղական և միջազգային լրագրողական և իրավապաշտպան կազմակերպությունների հետ:

- Հնարավորինս կազմակերպել և իրականացնել ռազմական գործողությունների լուսաբանման գործուղվող լրագրողների, օպերատորների, վարորդների և նրանց ուղեկցող անձանց անհատական պաշտպանական միջոցների, արտահագուստի, տարբերանշանների ձեռքերումը:

- Լրագրողական համայնքի գործընկերների հետ ակտիվորեն ներգրավվել ռազմական գործողությունների լուսաբանման գործուղվող լրագրողների, օպերատորների, վարորդների և նրանց ուղեկցող անձանց կյանքի և առողջության ապահովագրության օրենսդրական և այլ անհրաժեշտ հիմքերի ապահովման աշխատանքների իրականացմանը:

- Մշակել և կիրառել ԶԼՄ-ների աշխատակիցների անվտանգության ուղեցույցներ կամ սեփական նպատակներին համապատասխանեցնել առկա տեղական և միջազգային համանման փաստաթղթերը:

Սույն Ուղեցույցին կից է 3 հավելված՝ BBC-ի արաբական ծառայության գլխավոր տնօրեն (Lead Director) Էդմոնդ Սաբելլանի խորհուրդները բախումների գոտում աշխատող լրագրողների համար՝ media.am-ի թարգմանությամբ, «ՀՀ պաշտպանության նախարարության «Ուղեցույց հակամարտության գոտում մարտական գործողությունները լուսաբանող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար» փաստաթուղթը, «ՀՀ պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը:

Ընդունվել է Զանգվածային լրատվության միջոցների էթիկայի Դիտորդ մարմնի 2021թ. հուլիսի 12-ի նիստում:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձևավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 63-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:

Հավելված 1

Խորհուրդներ ռազմական բախումների գոտում աշխատող լրագրողների համար

Ճամփորդության պատրաստվելիս՝

- Նախապես ուսումնասիրեք այն տեղանքը, ուր ուղևորվում եք:
- Ծանոթացեք ձեզ հետ ճամփորդելիք թիմի մյուս անդամների հետ, եթե ծանոթ չեք:
- Տեղեկացեք տվյալ տարածքի քաղաքական, մշակութային, էթնիկ խնդիրներին:
- Պարզեք, թե ձեր գտնվելու վայրին մոտ ինչ ենթակառուցվածքներ, բուժհիմնարկներ են տեղակայված:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- անձնագիր և փաստաթղթերի համար լուսանկարներ,
- նույնականացման քարտ (ID),
- թղթե քարտեզներ,
- առողջապահական ապահովագրության և վարորդական իրավունքի վկայականներ:

Գնահատեք վտանգները՝ նկատի ունենալով հետևյալ հանգամանքները.

- Կա՞ արդյոք ռազմական ընդհարումների, քաղաքացիական բախումների, ահաբեկչության կամ այլ ոճրագործության սպառնալիք:
- Առկա՞ են բնապահպանական կամ աշխարհագրական ռիսկեր:
- Կա՞ն արտակարգ կամ ճգնաժամային իրավիճակի վտանգներ:
- Կա՞ առևանգման կամ ձերբակալման սպառնալիք:
- Կա՞ն կապի, տրանսպորտի, տեղեկատվական անվտանգության հետ կապված խնդիրներ:
- Կա՞ն թիմում ձեր արյան խումբն ունեցող մարդիկ:
- Ունե՞ք այնպիսի մարդկանց կոնտակտներ, որոնց կարող եք դիմել անհրաժեշտության դեպքում:

Անհրաժեշտ սարքավորումներ

- առաջին անհրաժեշտության իրերով պայուսակ,
- սեփական անվտանգությունն ապահովող իրեր (զրահաբաճկոն, սաղավարտ, ակնոց և դիմակ),
- առօրյա հագուստ,
- առաջին բուժօգնության պարագաների դեղարկղ,
- կապի միջոցներ:

Առաջին անհրաժեշտության պարագաների մեջ պետք է լինեն՝

- վնասվածքների համար նախատեսված վիրակապեր,
- փաստաթղթերի՝ լամինացված պատճեններ,
- կանխիկ զումար,

- բժշկական կպչուն ժապավեն,
- տեղանքի քարտեզ,
- կողմնացույց,
- լապտեր,
- սուլիչ,
- գլխաշոր,
- սպիտակուցներով հարուստ սնունդ և շոկոլադ,
- շվեյցարական բանակային դանակ,
- պինդ պարան,
- հասարակ բջջային հեռախոս և մեկ հավելյալ մարտկոց:

Անձնական անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ է՝

- Միշտ զգոն լինել և շուտ նկատել վտանգը:
- Արագ գնահատել, թե որքանով է վտանգավոր այն դիրքը, որտեղ գտնվում եք:
- Հնարավորության դեպքում լքել տարածքը ու պատսպարվել ավելի անվտանգ տեղում:
- Անհրաժեշտության դեպքում դիմել տեղացիների օգնությանը, քանի որ նրանք ավելի լավ գիտեն տարածքը:
- Կրել հարմարավետ հագուստ, չկրել զարդեր:
- Ինքնավստահ գործել և չընդունել շփոթված տեսք:
- Փորձել զերծ մնալ ավելորդ ուշադրությունից:

Մեքենայում անհրաժեշտ է՝

- Նստել վարորդի հետևում:
- Իմանալ, թե ուր եք գնում, ով է վարորդը:
- Ստուգել մեքենայի անվադողերը, լույսերը:
- Վճարման մասին պայմանավորվել մինչև ճանապարհ ընկնելը, բայց վճարել միայն տեղ հասնելուց հետո:
- Կողպել մեքենայի դռները:
- Առջևից ընթացող մեքենայից բավարար հեռավորություն պահպանել:
- Կայանել մեքենան այնպես, որ հարկ եղած դեպքում հնարավոր լինի արագ հեռանալ:
- Ճիշտ դասավորել սարքավորումները մեքենայում:
- Կապել ամրագոտի:

Անցակետերում՝

- Հաղորդակցվեք թիմի այլ անդամների հետ, կողպեք դռները, ցույց տվեք ձեր ձեռքերը և պատրաստ պահեք ձեր փաստաթղթերը:
- Խնդրեք վարորդին թուլացնել մեքենայի լուսավորությունը:
- Անցակետում զննման ժամանակ 1/3-ի չափով բացեք մեքենայի պատուհանը և շարժիչը միացրած պահեք:
- Եթե լեզուն չեք հասկանում, ցույց տվեք ձեր փաստաթղթերը և քարտեզի վրա ցույց տվեք, թե որտեղից եք գալիս և ուր եք գնում:
- Հանգիստ և քաղաքավարի եղեք:

- Մի առաջարկեք ալկոհոլ որևէ մեկին:
- Մի փորձեք առաջարկել որևէ երրորդ անձի տեղ հասցնել:

Զինված ընդհարումների գոտում անհրաժեշտ է ունենալ՝

- զրահաբաճկոն, սաղավարտ և պաշտպանիչ ռետինե ակնոց,
- վնասվածքները վիրակապելու համար նախատեսված տուփ, որի մեջ պետք է լինի անշարժացնող հենակ (տուրնիկետ), արյունը դադարեցնող որևէ միջոց, այլ վիրակապեր,
- արբանյակային հեռախոս,
- ճանապարհորդական ապահովագրության փաստաթուղթ:

Հրետակոծության ժամանակ, պետք է՝

- Դարանակալել մեքենան: Եթե կրակում են մեքենայի վրա, ցած իջեցրեք ձեր գլուխը և փորձեք մեքենայով արագ հեռանալ: Եթե մեքենան վնասվել է և կանգ է առել, դուրս եկեք մեքենայից, թաքնվեք շարժիչի մոտ, մեքենայի հետնամասում և պատրաստվեք փախչել մեքենայի մոտից:
- Եթե փոքր տրամաչափի հրաձգային զենքից են կրակում, կռացեք կամ պառկեք և փորձեք պատսպարվել հաստաբուն ծառերի կամ պատերի հետևում կամ ստորգետնյա որևէ տեղում:
- Նռնակներից պաշտպանվելու համար վարվեք նույն կերպ, ինչպես փոքր տրամաչափի զենքերի դեպքում:
- Խոշոր տրամաչափի հրազենի կամ ծանր հրետանու դեպքում որքան հնարավոր է հեռվից նկարեք և օգտագործեք տեսախցիկի «zoom in» հնարավորությունը:

Եթե տեղանքում ականներ կամ պայթուցիկ նյութեր կան՝

- Հնարավորինս տեղաշարժվեք միայն ասֆալտապատ տարածքով և ուշադրություն դարձրեք ականապատման վերաբերյալ նշաններին:
- Ականապատ տարածքում գտնվելու դեպքում կանգ առեք, մյուսներին հրահանգեք նույնպես կանգ առնել, գնահատեք իրավիճակը, օգնություն կանչեք և սպասեք: Եթե օգնություն չկա, փորձեք հետ վերադառնալ նույն ճանապարհով, որով եկել եք (ձեր ոտնահետքերով):
- Ձեռք մի տվեք պայթուցիկ նյութերի մնացորդներին, անգամ մոտ մի գնացեք դրանց:
- Ինքնաշեն պայթուցիկ սարք տեսնելու դեպքում փոխեք ճանապարհը, փորձեք աչքի չընկնել, ուշադիր զննեք տարածքը, լարերը, փորված հողը: Միշտ մտածեք, որ երկրորդ հնարավոր հարձակումը կարող է լինել:

Առևանգման կամ ձերբակալման դեպքում՝

- Օրինական ձերբակալման դեպքում քաղաքավարի և զիջող եղեք, ցույց տվեք ձեր փաստաթղթերը, թույլտվություն հարցրեք խոսելուց առաջ, իմացեք օրենքները:
- Առևանգման վտանգի ժամանակ փորձեք աչքի չընկնել ոչ մի իրադրությունում, հաճախ փոխեք ճանապարհը, մի վստահեք որևէ մեկին, միշտ ունեցեք սարքին մեքենա և անվտանգ սենյակ:

- Գերեվարվելու կամ պատանդ լինելու դեպքում՝ հաղորդակցվեք մյուս գերիների հետ, հոգեպես և ֆիզիկապես պատրաստ եղեք ամենավատ փորձություններին, ուշադիր զննեք առևանգողների վարքը, փորձեք հաղորդակցվել, ընդունեք նրանց տված ուտելիքն ու ջուրը, որպեսզի ուժեղ մնաք: Եթե փախուստի փորձ եք արել, աշխատեք արագ պատսպարվել: Նկատվելու դեպքում՝ մի վազեք, կտրուկ շարժումներ մի արեք, նայեք հակառակորդի աչքերին, փորձեք խոսել, բանակցել:

Հավելված 2

ՀՀ պաշտպանության նախարարության «Ուղեցույց հակամարտության գոտում մարտական գործողությունները լուսաբանող զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար»

https://www.mil.am/files/LIBRARY/%D5%88%D6%82%D5%B2%D5%A5%D6%81%D5%B8%D6%82%D5%B5%D6%81.pdf

Հավելված 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՄԱՍԻՆ

Ընդունված է Ազգային ժողովի կողմից
3 դեկտեմբերի 1996 թ.

ԳԼՈՒԽ 2
ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՇԱՐՔԻՆ ԴԱՍՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 9. Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին դասելուն ենթակա տեղեկությունները

Պետական և ծառայողական գաղտնիքի շարքին կարող են դասվել հետևյալ տեղեկությունները.

1. Ռազմական բնագավառում՝

ա) զինված ուժերի ռազմավարական և օպերատիվ պլանների, օպերացիաների նախապատրաստման և անցկացման, զորքերի ռազմավարական, օպերատիվ և զորահավաքային ծավալման, նրանց մարտունակության և զորակոչային պահեստազորի ստեղծման ու օգտագործման վերաբերյալ փաստաթղթերի բովանդակության մասին.

բ) ռազմարդյունաբերական համալիրի ծրագրերի, դրանց բովանդակության և կատարման արդյունքների, սպառազինությունների և ռազմական տեխնիկայի զարգացման ուղղությունների, դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի ու մարտական կիրառության հնարավորությունների մասին.

գ) հատուկ կարևորության և ռեժիմային օբյեկտների տեղաբաշխման, նշանակության, պաշտպանվածության ու պատրաստականության աստիճանի, դրանց նախագծման և շինարարության, ինչպես նաև այդ օբյեկտների համար տարածքներ հատկացնելու մասին.

դ) Հայաստանի Հանրապետության տարածքում դաշնակից պետությունների և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի միավորումների ու զորամասերի տեղաբաշխման, իսկական անվանումների, կազմակերպչական կառուցվածքի, զինվածության և թվաքանակի մասին.

ե) ռազմական դրության ժամանակ բնակչության պաշտպանվածության, ապահովվածության աստիճանի մասին: